

ՅԵ. ՄՈՎՍԻՍՅԱՆ

ԲԱՆՁԱՐԱՆՈՑՆԵՐԻ
ՊԱՐԱՐՏԱՑՈՒՄԸ

631
Մ-91

ԳՐԱԴԱՐԱՆ

1935

ՅԵՐԵՎԱՆ

30 JUL 2010

ՅԵ. ՄՈՎՍԻՍՅԱՆ

631
15-91

ԲԱՆՉԱՐԱՆՈՑՆԵՐԻ
ՊԱՐԱՐՏԱՑՈՒՄԸ

Կիբրաքարյանը՝ Ռ. Քաջազնուրյանը

04 JUL 2013

ՅԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Բանջարանոցային մշակույթների բերքը բարձրացնելու գործում ազրոտեխնիկական ամրողջ կոմպլեքսի մեջ պարարտացումը գրավում և պատվավոր տեղ: Մեր յերկրում գարգացող քիմիական արդյունաբերությունը մեծ քանակությամբ հանքային պարարտանյութեր և տրամադրում նաև բանջարաբուծությանը: Միության Հողժողկոմատի հանքային պարարտանյութերի սեկտորը 1937 թվի համար բանջարանոցները պարարտացնելու հետեւյալ պլանն ե կազմել. 3 միլիոն հեկտար բանջարանոցների ընդհանուր տարածությունից հանքային պարարտանյութերով պարարտացվելու յե 2,100,000 հեկտարը. այդ տարածության համար նախատեսված և հատկացնել 360,000 տոնն սննդանյութ պարունակող հանքային պարարտանյութ: Դրանց հետ մեկտեղ պետք և ոգտագործվեն տնտեսությունների ամեն տեսակի թափուկները:

Այդ բոլորը կատարվում են նրա համար, վոր բարձրացնենք բանջարանոցների բերքատվությունը, իսկ բանջարեղենի առատ բերքն անհրաժեշտ և ժողովնդի գործը բարձր աստիճանի վրա դնելու և զարդացող կոնսերվի արդյունաբերությունը լավորակ և առատ հումքով պահեռվելու համար: Բանջարեղենների միջոցով մենք ստանում ենք վոչ միայն որգանական սնունդ, այլև հանքային և անչափ կարևոր՝ վիտամինային սնունդ:

Այդ բոլորը պահանջում են մեղանից ծանոթ լինել մեր պայմաններին և ձիւտ կազմակերպել պարարտացման գործը նաև բանջարաբուծության մեջ:

Այս գրքույկով ցանկացել ենք համառոտ կերպով լուսաբանել այդ խնդիրները՝ սոցիալիստական դաշտերի հերոս կոլտընտեսականների համար:

ՅԵՐԿՈՒ ԽՈՍՔ



ԲԱՆՉԱՐԱՆՈՑԱՅԻՆ ԲՈՒՑՍԵՐԻ ԽՄԲԱՎՈՐՈՒՄԸ ՅԵՎ ԱՌԱՆՁ-
ՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝ ԿԱՊՎԱԾ ՀՈՂԻ ՊԱՐԱՐՏԱՑՄՍՆ
ՀԱՐՑԻ ՀԵՏ

Բանջարանոցային բույսերն իրենց տեսակներով խիստ քաղմաթիվ են և պատկանում են բուսաբանական գանազան ընտանիքներին։ Հաճախ նույն ընտանիքին պատկանող բանջարեղեն բույսերն այնքան տարբեր հատկություններ և հողի ու պարարտանյութերի նկատմամբ այնքան տարբեր պահանջներ ունեն, վոր անհնարին և նրանց մի խմբի մեջ վերցնել և հողի պարարտացման խնդիրները միասին ուսումնասիրել։ Որինակ՝ նույն ընտանիքին (սոլանաց ե) են պատկանում կարտոֆիլը, պամիզորը և ծխախոտը. բայց սրանց պահանջները հողի և առհասարակ ազգութեինիկայի նկատմամբ խիստ տարբերվում են միմյանցից։

Այս գրքույկի խնդիրներից յենելով՝ բանջարանոցային բույսերը մենք խմբավորում ենք յենելով՝ նրանց պահանջի ընդհանրությունից՝ հողի ու պարարտացման նկատմամբ։

1. Տերեփարանջարեղեններ (կաղամբ, սալաթ, կանաչեղեն, սպանախ, կանաչ սոխ և այլն)։

2. Պղպաթնջարեղեններ (տոմատ, բաղրիջան, տաք-դեղ, վարունգ և այլն)։

3. Արմատապարապուղներ (ձակնդեղ, գաղար, շաղփամ, բողկ, կարտոֆիլ և այլն)։

4. Բուսանային բույսեր (սեխ, ձմերուկ, դդում)։

5. Ընդեղեններ (լոբի, վոլոռն, սիսեռ, բակլա և այլն)։

Ենորհիվ նրա, վոր բանջարանոցային բույսերը պատկանում են բուսաբանական տարբեր խմբերի և իրենց ոգտագործվող մասերով միմյանցից տարբերվում են, տարբեր վերաբերմունք են ցույց տալիս դեպի հողը, կիմայական պայմանները, ջուրը, մշակությունը, պարարտացումը և այլն։ Զնայած այդ տարբերություններին, բանջարանոցային բույսերը (գրեթե բոլորը) աչքի յեն ընկնում հետեւյալ ընդհանուր հատկություններով՝ կապված պարարտացման հետ։

1. մեկ հեկտարից մեծ քանակությամբ բերք են տալիս։

2. մեծ մասամբ աճեցողության կարճ շրջան ունեն։

3. աճեցողության կարճ շրջանում հողից մեծ քանակությամբ հանքային մննդանյութեր են հանում։

4. նորմալ զարգանալու համար պահանջում են, վոր հողի մեջ գտնվող հանքային մննդանյութերը լինեն հեշտ յուրացվող—մատչելի վիճակում։

5. բանջարանոցային բույսերի գրեթե բոլոր տեսակները հողից մեծ չափով վերցնում են կալի և ազոտ. ֆոսֆորաթթվի համեմատաբար քիչ պահանջ ունեն։

6. բանջարանոցային բույսերը մեծ բերք են տալիս այն հողերում, վորոնք լավ են մշակված, ապահոված են որգանական նյութերով և դրանց շնորհիվ լավ ստրուկտուրա ունեն։

Ցույց տալու համար, թե բանջարանոցային մի քանի բույսեր յուրաքանչյուր տարվա բերքի հետ մեկ հեկտար հողից վորքան մննդանյութեր են հանում, տեսնենք սոսորե զրված աղյուսակը. համեմատառթյան համար այդ շարքում տեսնենք նաև 2—3 տեսակ դաշտային կուլտուրաների թվեր։

ԿՈՒԼՏՈՒՐԱՆԵՐ	ԲԵՐԲՐ ՑԵՆՏՐԱԿԱ- ՔԻՎԱՄ- ՔԻՑ	ՄԵԿ ԲԵՐՔԻ ՀԵՏ հեկտարից նախած ՄՆԱԴԱՆՅՈՒԹԵՐԸ ԿԵՐՊԱՐԱՄՈՎ			
		N	P ₂ O ₅	K ₂ O	CaO
Կաղամբ	700	230	88	311	420
» վաղահաս	300	152	47	137	168
Շաղամ	600	210	80	270	—
Բողկ	400	160	75	370	160
Գաղար	300	95	30	150	120
Ճակնդեղ	550	134	45	259	91
Ս ո խ	300	90	37	120	72
Տոմատ	400	103	16	144	133
Վարունդ	—	51	41	78	27
Սպահակ	200	94	34	208	44
Ցորեն	24+40 ցենտրա- դարման	70	30	50	12
Շաքարի ճակնդեղ . . .	400	150	60	175	120
Մարգագետնի խոտ . . .	60	90	36	120	80
Կաբուֆիլ	200	90	40	160	50

Ինչպես յերկում ե աղյուսակի թվերից, բանջարանոցային բույսերի թե բերբը և թե այդ բերքի հետ հողից վերցրած մննդանյութերը շատ էն և մեծ մասամբ անցնում էն դաշտային կուլտուրաներից:

Սակայն հողերի պարարտացման հարցը քննելիս սխալ կլիներ միայն ուշադրություն դարձնել այն խնդրի վրա, թե վոր բույսը վորքան մննդանյութ և հանում հողից և զրա չափով ել պարարտացնելիք հողը: Դրա հետ մեկտեղ, պետք ե հաշվի առնել այն հարցը, թե հողն ինչքան մննդանյութեր և պարունակում, թե ավյալ բույսի արմատները ինչ չափով կարող են ոգտագործել հողի մեջ դանվող մեծ մասամբ զժվարալուծ մննդանյութերը: Պետք ե հաշվի առնել նաև այն, թե բույսի վեգետացիոն (աճեցողություն) շրջանն ինչ տևողություն ունի, և, վերջապես, մշակվող բույսն աճեցողության վոր շրջանում շատ կարիք և զգում մննդանյութերի: Որինակ՝ բանջարանոցային բույ-

սերի շարքում կան թիթեռնածաղիկ բույսեր, վորոնց հողերը չպետք ե պարարտացնել ազոտական պարարտանյութերով, իսկ մյուս բույսերի համար ազոտական պարարտանյութերը գրեթե միշտ ել անհրաժեշտ են:

Յերկար վեգետացիոն շրջան ունեցող բույսերի համար անհրաժեշտ չե, վոր հողի մեջ հեշտ լուծվող մննդանյութերն այնքան շատ լինեն, ինչքան այդ անհրաժեշտ ե կարճ վեգետացիա ունեցող բույսերի համար:

Այդ բանը տեսնելու համար նայենք 2-րդ աղյուսակին, վոր ցույց ե տալիս, թե քանի գրամ մննդանյութ ե կանվում հողից ամեն որ մեկ ցենտրական չոր նյութի հետ:

ԲՈՒՑՈՒ	Թաց բերք ՑԵՆՏՐԱԿԱ- ՔԻՎԱՄ- ՔԻՑ	Չոր բերք ՑԵՆՏՐԱԿԱ- ՔԻՎԱՄ- ՔԻՑ	Վեգետացի- չոր բերք ՑԵՆՏՐԱԿԱ- ՔԻՎԱՄ- ՔԻՑ	ՄԵԿ ցենտրական չոր բերք հետ 1 որում հաճած նյու- թերը գրամով			
				N	P	K	NPK
Բողկ ամսական	100	7	30	236	90	240	566
Լորի կանաչ	120	12	100	90	22	69	181
Սպանախ	200	20	60	60	30	86	176
Վարունդ	300	15	100	34	27	52	113
Կարտոֆիլ վաղահաս . . .	200	40	70	35,7	10,7	50	96
Սոխ	300	40	100	22,5	9,0	30	61,5
Տոմատ	400	30	150	22,6	3,53	32	58
Գաղար	300	40	120	19,7	6,2	37,2	56
Կաղամբ	500	50	150	22	8	25	56
Գարի գարնանցատն . . .	30	28,5	100	28	14	28	70
Տարեկան աշնանցատն . .	30	25	210	16	7	12	35

Ինչպես յերկում ե աղյուսակից, ամսական բույս որպական բույրից շատ մննդանյութեր և վերցնում հողից. առհասարակ պետք ե ասել, վոր կարճ վեգետացիա և շատ բերք տվող բույսերն իրենց աճեցողության համար միշտ պահպան շատ լուծվող մննդանյութեր են պահանջում, քան յերկար վեգետացիա ունեցողները:

Այս տեսակետից ել պարարտանյութերը ընտրելու հողը պահպան ժամանակ միշտ ել պետք ե հաշվ առնել նաև բույսի վեգետացիոն շրջանի տեղողությունը

Պարաբռտացման աշխատանքների հետ չի կարելի չկապել նաև բանջարեղենների վորակի խնդիրը: Բանջարեղենների վորակի ցուցանիշներից մեկն սպիտակուցների քանակն եւ թե տարրեր պարաբռտանյութերը և նրանց տարրեր քանակություններն ինչպես են ազդում տոմատի մեջ սպիտակուցների կուտակման վրա, կարելի յէ տեսնել հետեւյալ աղյուսակից. փորձը կատարվել եւ Մոսկվայի մոտիկ խորհրդային տնտեսության ջերմոցներում:

ՊԱՐԱԲՐՏԱՆՑՈՒԹԵՐԻ ԶԵՎԸ ՑԵՎ ԴՈԶԱՆ	Սպիտակուցները	
	0/0-ՆԿԲՊՎ ԸՆԼԻ ԸՆԼԻ	0/0-ՆԿԲ ԸՆԼԻ ԸՆԼԻ
Կոնտրոլ առանց պարաբռտացնելու . . .	0,202	100
NP	0,318	157
NK	0,291	144
PK	0,313	154
NPK	0,303	150
N ₂₅ PK	0,345	170,7
NP ₂₅ K	0,335	165,8
NPK ₂₅₀	0,310	153,4

Կանոնավոր պարաբռտացումը լավացնում եւ բանջարեղենների վոչ միայն քիմիական կազմությունը, այլև բարձրացնում եւ նրանց տեխնիկական մի շարք հատկությունները, իսկ չափից շատ միակողմանի պարաբռտացումն իջեցնում եւ բանջարեղենի վորակը:

Դերմանական բաղմաթիվ փորձերը պարզել են, փորկալի պակասության դեպքում վարունգի բերքն իջնում ե 2,1⁰/₀-ով, իսկ վորակը՝ 12,1⁰/₀-ով, ֆոսֆորի պակասից բերքն իջնում ե 10,1⁰/₀-ով, իսկ վորակը՝ 34,3⁰/₀-ով, աղոտի պակասից բերքն իջնում ե 34,1⁰/₀-ով, իսկ վորակը՝ 16,8⁰/₀-ով:

Ընդհակառակն՝ կալի մեծ դոզան բերքն իջնցրել ե 9,4⁰/₀-ով, իսկ վորակը՝ 4,0⁰/₀-ով, ֆոսֆորի մեծ դոզան

առանձին վաստ չիպատճառում. ազոտի մեծ դոզան ձգձգում ե վեգետացիան, ուշ ե հասունանում, բույսն ավելի յենթակա յեւ դառնում մնկային և միջատային հիվանդությունների, և այն:

Բանջարեղենները մեր որդանիզմի համար վոչ միայն որդանական սննդի և վիտամինների աղբյուր են, այլև խոշոր չափով հանքային սննդի աղբյուր են: Մեր որդանիզմը նորմալ գործունեության համար կարիք ունի կրի, կալիումի, յերկաթի, խոտի, մագնիֆի և այլ հանքային նյութերի. այդ նյութերը հանքային աղերի ձևով այնքան ել մատչելի չեն մեր որդանիզմի համար: Բանջարեղեն բույսերը հողից վերցնելով այդ բույրը՝ իրենց մեջ այնպիսի վիճակի յեն վերածում, վորից շատ հեշտությամբ յուրացվում են մեր մարմնի կողմից: Այդ տեսակետից բանջարեղեն սննդն մեզ համար վորոշ մտքով նաև հանքային մնունք ե:

ԲԱՆՉԱՐԱՆՈՑԱՅԻՆ ԲՈՒՅՍԵՐԻ ՔԻՄԻԱԿԱՆ ԿԱԶՄԸ ԿԱՊՎԱԾ ՀՈՂԻ ՊԱՐԱԲՐՏԱՑՄԱՆ ՀԱՐՑԻ ՀԵՏ

Բանջարեղենները միմյանցից խիստ տարբերվում են իրենց քիմիական կազմով. նույն բանջարեղենի քիմիական կազմը կախված ե նրանից, թե ինչ հողային և կիմայական պայմաններում ե աճել նա, հողն ինչ պարաբռտանյութով ե պարաբռտացվել, աճման վեր աստիճանումն ե գտնվում, և այն: Բանջարեղենի քիմիական կազմը փոխվում ե նաև բերքը հավաքելուց հետո, նայած թե ինչ պայմաններումն ե պահպել նաև պահպելուց հետո, նաև թե ինչպես են պահպել և պատրաստվել նրանք ուտելու համար,

Զուր.— Բանջարեղենների մեծագույն մասն աչքի յենկնում նրանով, վոր մեծ բանակությամբ ջուր և պարունակում, թարմ բանջարեղենների մեջ 65⁰/₀-ից մինչև 95⁰/₀ ջուր և լինում: Ջրով առաս բանջարեղեններից մի քանիսը բավարար չափով գործադրելու դեպքում յերբեմն

կարող են փոխարինել ջրին, ինչպես՝ ձմերուկը, վարունգը և այլն:

Ջրի առատ քանակության հետևանքով բանջարեղենները շատ հեշտությամբ յենթարկվում են զանազան միկրոօրգանիզմների (մնկեր, բակտերիաներ) ագդեցությանը և փշանում: Այդ պատճառով ել յերբեմն բանջարեղենները պահելու համար նրանց չորացնում են:

Չոր նյութեր.—Ջրից բացի, մյուս բոլոր նյութերը կոչվում են չոր նյութեր. սրանց քանակությունը բանջարեղենների մեջ լինում է 5—35%: Չոր նյութերը բաղկացած են հանքային կամ մոխրային նյութերից և որգանական կամ այրվող նյութերից:

Հանելային կամ մոխրային նյութերը.—Նրանք են, գորոնք մնում են, յերբ չոր նյութն այրում են. այդ նյութերը բույսի մեջ են անցնում հողից և խիստ կարենոր գեր են կատարում բույսերի սննդառության գործում: Բանջարեղենների վորակը շատ անգամ պայմանավորվում է նրանցում գտնվող հանքային նյութերի քանակով և նրանց կազմությամբ, վորովհետև շնորհիվ այդ նյութերի յե, վոր կաղմակերպվում են կմնաչ բույսերի մեջ գրեթե բոլոր որգանական սննդարար նյութերը: Հողի մեջ հանքային սննդանյութերի անբավարար քանակի դեպքում խիստ նվազում է այդ հողի բերքատվությունը. այդպիսի հողերից բարձր բերք ստանալու համար պետք է արհետական ճանապարհով շատացնել հանքային սննդանյութերի քանակը, վորև կատարվում է պարարտացման ժամանակ:

Բանջարեղենների չոր նյութերի մեջ հանքային նյութերի քանակը տատանվում է 5—25%՝ ի սահմաններում. հատիկավորների (ընդեղենների) մեջ լինում է մոտ 5%, պտղաբանջարեղենների մեջ՝ մոտ 10%, իսկ տերևաբանջարեղենների մեջ կարող է համել մինչև 25%:

Բանջարեղենների մոխրի մեջ գլխավոր նյութերն են. ա) կալիումը, վորի ոքսիդը (K_2O) իր քանակով ամենաառաջին տեղն ե բանջարեղեններից մեծ մասի մոխրի մեջ: Այս նյութը մեծ չափով կուտակվում է բույսի կանաչ մասերում, կարտոֆիլի և ճակնդեղի մեջ. առհասարակ այն տեղերում, վորտեղ պատրաստվում կամ հավաքվում են ածխաջրերը (շաքարները): Կալիումը նպաստում է շաքարների և ոսլայի առաջացմանը.

բ) կալցիումը, վորի ոքսիդը (CaO) յերբեմն իր քանակով կանաչ բույսերի մեջ հետ չի մնում կալիումից: Հատիկների մեջ ավելի քիչ ե լինում, կալցիումը մեծ չափով նպաստում է թիթեռնածաղիկ բույսերի (ընդեղենների) լավ զարգացմանը, սպիտակուցների կուտակմանը, ինչպես նաև մի շարք բանջարեղենների մեջ, չեղոքացնում ե ավելորդ որդանական թիթունները: Մեր որդանիզմի համար կալցիումը խիստ կարենոր նյութ ե, վորովհետև նրա հաշվին են կազմակերպվում և ամրանում մեր վոսկորները, ատամները և այլն: Ուրեմն, բանջարեղենները մեզ համար, ի միջի այլոց, նաև կալցիի սննդանյութ կարելի յե համարել.

գ) յերկաթի քանակը թեև բանջարեղենների մեջ (առհասարակ բույսերի մեջ) խիստ քիչ է (100 գր չոր նյութում 1—5 միլիգրամ), բայց և այսպիս նրա նշանակությունը շատ մեծ է թե բույսերի և թե մեր մարմնի համար: Առանց յերկաթի բույսերը չեն կանաչում:

Բանջարեղենների մեջ յեղած յերկաթն անցնելով մեր արյան մեջ՝ կատարում է խիստ կարենոր գեր մեր շնչառության գործում:

դ) մագնիսիում (MgO) նույնական մեծ քանակությամբ չի լինում մոխրի մեջ, սակայն իր վոքր քանակությամբ կատարում է խիստ մեծ գեր, վորովհետև մտնում է քլորոֆիլի կազմության մեջ: Առանց մագնեզիումի քլո-

րոֆիլ չի կազմակերպվում, իսկ յեթե չի լինում քլորոֆիլը, ապա հանաչ բույսը մնի և որդանական նյութ արտադրել չի կարող.

ե) Քոսմորը (P_2O_5) լինում ե ավելի շատ հատիկների և սերմերի մեջ. Փոսֆորը մեծ մասամբ մտնում ե սպիտակուցային նյութերի մեջ, առանց նրան չեն կազմակերպվում կյանքի համար խիստ կարեոր մի շարք սպիտակուցները: Սոխիբների մեջ փոսֆորաթթվի (P_2O_5) քանակը տատանվում է 6—30% սահմաններում. ավելի շատ լինում ե սերմերի և հատիկների մոխրի մեջ, ավելի քիչ՝ տերենների, ցողունների և արմատների մոխրի մեջ.

զ) ծծումբը (SO_3) փոսֆորի նման գտնվում ե մի շարք սպիտակուցների մեջ, ինչպես նաև՝ սոխի և սխտորի մեջ (սխտորի յուղ): Ծծմբի քանակը բանջարեղենների մեջ միշտ ավելի քիչ է լինում, քան թե փոսֆորի քանակը:

Մի քանի բանջարեղենների մոխրի քանակը և այդ մոխրի քանակը ցույց տալու համար, մեջ ենք բերում հետեւալ աղյուսակը: Թվերը հաշված են $^0/_{10}$ -ներով՝ չոր նյութերի նկատմամբ:

Արգանական նյութեր.—Բանջարեղենների չոր նյութերի այրվող մասը բաղկացած է բազմաթիվ որդանական նյութերից: Բույսերի և մյուս մննդամթերքների մեջ յեղած այդ նյութերը մեր մննդառության գործում կատարում են ամենակարենոր դերը:

Թեև բանջարանցային բույսերի չոր մնացորդի մեջ որդանական նյութերը կազմում են $75—95/_{10}$, բայց փորովետև բանջարեղենների մեծ մասը թարմ վիճակում յերեմն մինչև $95/_{10}$ ջուր և պարունակում, այդ պատճառով ել որդանական նյութերը նրանցում քիչ տոկոս են կազմում: Բայց և այնպես բանջարեղենների մննդառութեքը և վորակը մեծ չափով կախում ունեն նրանց մեջ գտնվող որդանական նյութերի տեսակներից և քանակից:

Բույսերի որդանական նյութերն առաջնում են տե-

րևեների մեջ գանվող բլորոֆիլի միջոցով՝ ողի ածխաթթու գազի (CO_2) և ջրի հաշվին. այդ աշխատանքի համար ոդագործվում և արեի ձառադայթների եներգիան. հողերի մեջ գտնվող և պարարտանյութերի միջոցով արվող հանքային մննդանյութերն իրենց հերթին նպաստում են այդ գործին և հաճախ մտնելով որդանական նյութերի մեջ՝ առաջացնում են շատ կարեռը նյութեր:

Բուսական որդանական նյութերը, վորոնք իրենց բանակով և նշանակությամբ աչքի յեն ընկնում բանջարեղենների մեջ, հետեւյալ խմբերի կարելի լինութեր:

1) Լուծվող ածխացրաներ կամ անազոս ենսրակայալին նյութեր.—Այս խմբի մեջ մտնում են պարզ շաքարները (գլյուկոզա կամ խաղողաշաքար, ֆրուկտոզա կամ պտղաշաքար), յերկշաքարները (յեղեղնաշաքարը) և բազմաշաքարներից ուղան, պեկախնյան նյութերը և խնուլեն: Այս բոլոր նյութերը խիստ կարեռը նշանակություն ունեն մեր մննդառության մեջ, և մի շարք բանջարեղեններ ու դաշտային կուլտուրաներ հիմնականում մշակվում են նրանցում պատրաստվող ածխացրաներն ստանալու նպատակով: Այդպիսի բույսերից՝ են հացահատիկները, կարտոֆիլը, ձևկնդեղը և այլն:

Մի շարք բանջարեղենների թարմ տերենների մեջ (կաղամբ, սոխ, սպանախ, բաղուկ), պալարների մեջ (կարտոֆիլ, գեանախնձօքը), արմատների մեջ (ձակնդեղ, գաղար) հիմնական որդանական նյութերն ածխացրաներն են: Բանջարեղենները վորքան հարուստ են լինում ածխացրաներով, այնքան բարձր փորակի յեն լինում:

Բույսերի մեջ յեղած ածխացրաներն այն նախնական նյութերն են, վորոնցից հետագայում առաջանում են մյուս բոլոր որդանական նյութերը. սրանք փոտոսինթեզի անմիջական արդյունք են: Ածխացրաների առաջացման և կուտակման գործում բազմաթիվ գործոններ մասնակցություն են ունենում: Սակայն մեզ հետաքրքրող լինդիրնե-

րից յեխելով՝ հիշատակենք, վոր հանքային պարարտանյութերն այդ գործում կատարում են իսկստ կարեօր գեր: Առանց կալիումի և կրի ֆոտոսինթեզն առաջ չի գնում: Բազմաթիվ փորձեր՝ կատարված կարտոֆիլի, ճակնդեղի և պտուղների հետ՝ ցույց են տվել, վոր յերբ հողն աղքատ ե լինում կալիումով, ապա զրանից ստացվող բերքի մեջ ուլայի և ավելի պարզ շաքարների քանակությունն, ինչպես և ընդհանուր բերքը, խիստ պակաս և ստացվում: Այդ հողերը կալիական պարարտանյութերով պարարտացնելուց հետո բարձրանում ե թե բերքի քանակը և թե բերքի մեջ ածխաջրատների տոկոսը:

Առհասարակ հաստատված ե այն փաստը, վոր շատ ածխաջրատներ պատրաստող և կանաչ մասսան ոգտագործելու նպատակով մշակվող բույսերը իմաստ կարիք են զգում կալիական պարարտանյութերի: Այդպիսի բույսեր են բանջարեղենները: Այդ և պատճառը, վոր բանջարաբուծության մեջ գործածվող մոխիրն ու դոմազը համարվում են լավագույն պարարտանյութեր. սրանցից մոխիրը կարելի յե համարել կալիական պարարտանյութ, իսկ գումազըն իր բազմաթիվ առավելությունների շարքում աչքի յե ընկնում նաև նրանով, վոր մեծ քանակությամբ կալի յե պարունակում:

Որգանական բրուներ. — Բանջարեղենների մեծ մասը, մանավանդ գեռ չհասած ժամանակ, թթու համ և ունենում: Այդ թթվությունն արդյունք ե մի շարք թթու նյութերի, վորոնք մեծ մասամբ առաջանում են բույսերի մեջ ածխաջրատների և ուրիշ որգանական նյութերի հաշվին: Մի քանի բանջարեղենների վորակը պայմանավորվում ե նրանցում զանգվող որգանական թթուների տեսակներով և քանակով: Վորոշ աստիճանի թթվությունը բանջարեղեններին դարձնում ե ավելի հաճելի (թրթնջուկ, հավթծիլ պամիդոր և այլն): Խակ պտուղների և բանջարեղենների մեջ յեղած թթուների մեծ մասը չեզոքացվում ե կամ

ուրիշ նյութերի յե վերածվում հասունացման ընթացքում: Հասած պտուղներն ավելի քաղցր են թփում, քան խակերը, մասամբ շնորհիվ նրա, վոր նրանցում ազատ թթուներ գրեթե չեն մնում (ձմերուկ, տոմատ, պտուղներ):

Բանջարեղանների մեջ պատահում են բազմատեսակ որգանական թթուներ, գրանցից զլխավորներն են՝ թթվընջկաթթուն, լիմոնաթթուն, խնձորաթթուն, զինեթթուն:

Բույսերի մեջ, մանավանդ հասած ժամանակ, թթուների փոքր մասն ե լինում ազատ վիճակում. գրանց մեծ մասը մետաղների հետ քիմիապես միացած աղեր են կազմում: Բույսերի որգանական թթուները զլխավորապես միանում են կրի և կալիումի հետ. այդ տեսակետից կրի և կալիումի նշանակություններից մեկն ել, ինչպես ասել ենք, այն ե, վոր միանալով թթուների հետ, առաջացնում են չեզոք նյութեր՝ աղեր:

Բանջարեղենների մեջ ազոտ պարունակող նյութերը շատ բազմատեսակ են լինում. իրենց նշանակությամբ հաճախ նաև քանակությամբ, ազոտական նյութերի մեջ, առաջին տեղը պատկանում ե սպիտակուցային նյութերին: ազոտ պարունակող նյութերն անփոխարինելի մննդանյութեր են կենդանիների համար.

Սպիտակուցների մեջ միջին թվով 16% ազոտ կա: Փորձերը ցույց են տվել, վոր բույսերի մեջ սպիտակուցների և առհասարակ ազոտական նյութերի քանակությունը բարձրանում ե, յերբ հողերը պարարտացնում են ազոտական պարարտանյութերով. նշանակում ե, վոր ազոտական պարարտանյութերը զարկ են տալիս վոչ միայն բանջարեղենների բերքի քանակին, այլև նրա վորակն են բարձրացնում:

Բանջարեղեններից սպիտակուցներով և առհասարակ ազոտական նյութերով հարուստ են ընդեղենները. մյուս բույսերի մեջ սպիտակուցներն այնքան ել շատ չեն: Ընդեղենների հողերն ազոտական պարարտանյութերով պա-

ըարտացնելու կարիք չկա, քանի վոր գրանց արմատների
վրա ապրող և պալարկինել առաջացնող բակտերիա-
ներն ողի ազատը մատչելի յեն դարձնում այդ բույսերի
համար. Թիթենանազաղիկներից հետո հողերը հարսացած
են լինում ազոտով, և մյուս բույսերը, գորոնք նույն՝ հողի
վրա յեն մշակվում, այդ ազոտի շնորհիվ միշտ ել տալիս
են լավ բերք:

Ընդեղեններից զատ, մյուս բոլոր բանջարեղենները
կարիք են զգում, վոր նրանց հողերը, յեթե աղքատ են,
պարարտացվեն աղոտական պարաբռանյութերով:

Բանջարաբուծության մեջ հոգեբը պարարտացնելու
համար մեծ չափով գործածվող գոմաղբը բարձրացնում է
բանջարեղենների բերքը. Մեծ մասամբ ջնորհիվ նրա, վոր
գոմաղբի հետ մեծ քանակությամբ ազոտ և արվում հողին,
իսկ ազոտը զարկ է տալիս կանաչ մասսային:

Բյումերի հետազոտությունները ցույց են տալիս, վորքանջարեղենների մեջ յեղած ամբողջ ազոտի $35,5^{\circ}/_0$ — $82,2^{\circ}/_0$ -ը գտնվում է սպիտակիուցների ձևով։ Բանջարեղենների ամբողջ ազոտի մոտավորապես $73^{\circ}/_0$ -ը կարող է յուրացվել մեր որդանիզմի կողմից,

Վիտամիններ.—Վերջին ժամանակներս բոյսերի և ուրիշ մննդանյութերի մեջ հայտաբերվել են մի շարք նյութեր, վորոնք թեև շատ չնշին քանակով են գտնվում, բայց խիստ կարենը դեր են կատարում մեր մննդառության, աճեցողության և մի շարք հիվանդությունները կանխելու գործում. զրանց անվանել են վիտամին: Մինչև հիմա կատարված հետազոտությունները պարզել են 7 տարրեր տեսակի վիտամիններ: Դրանց անվանել են A, B, C, D, E, F և P տառերով: Վիտամինների մեծ մասի քիմիական ձիշտ կազմությունը գեռես պարզված չե, բայց նրանց յուրաքանչյուրի նշանակությունն արդեն վորոշ ե:

Մննդի մեջ յեթե վիտամինները բացակայում են, առաջ են գալիս մի շարք լուրջ և նույնիսկ մահացու հի-

վանդություններ. այդ հիվանդություններն արտագությամբ բուժվում են, յերբ հիվանդն սկսում է դործածել թարմ բան. ջարեղեն, պտուղներ, կաթ և այլն:

Բանջարեղենները հարուստ են վիտամիններով: Թարմ
բանջարեղենների գործածությանը ժողովրդական մնադի^{մեջ} վերջին ժամանակներու մեծ նշանակություն է արր-
վում հենց նրա համար, զոր նրանք հարուստ են վիտա-
միններով, և դրանց շնորհիվ մի շաբք հիվանդությունների
առաջացումը գառնում է անհնարի: Վիտամիններով հարուստ
մնադիր մեծ նշանակություն ունի հատկապես յեղեխա-
ների համար:

Վիտամիններից զլբավորները, վորոնք գտնվում են բանջարեղենների մեջ, հետեւյալներն են.

Վիտամին A (աճեցրության կամ յուղի վիտամին)։ — Այս վիտամինը շատ դժունվում և ձկան յուղի և կարագի մեջ, կանաչ և թարմ բանջարեղենները նույնպես բավականին A վիտամին են պարունակում, ինչպես սպանախը, տոմատը, կառամօռ, կանաչ լոբին և այլն։

33 Յերբ մինչև անդամ առաստ մննդի մեջ Ա վիտամինը
պակասում է, կանգ եւ առնում կենդանու աճեցողությունը,
քաշն աստիճանաբար պակասում է և, յերկար տևելու դեպ-
քում, վերջանում է մահով: Այս տեսակետից հատկապես
յերեխաների մննդի մեջ յուղը, կարագը և թարմ բանջա-
րեղենները խիստ անհրաժեշտություն են, քանի վորնարն-
ցում գտնվող Ա վիտամինը նման հիվանդության առա-
ջացմանը խանգարում է:

Վիտամին B.—Սննդի մեջ այս վիտամինի բացակայության հետևանքով առաջանում ե բերի-բերի կոչված հիվանդությունը—ախորժակը վակվում ե, նյութերի փոփառակալությունը խանգարվում ե, տիրում ե ընդհանուր թուլություն, առաջանում ե կաթված (պարալիչ) և վերջանում ե մահով։ Այս հիվանդությունը չի պատճենում այն դեպքում, յերբ սննդի հետ սիստեմատիկ կերպով գործ են

ածում թարմ բանջարեղեններ, վորոնք հարստատ են Յ
վիտամինով: Յ վիտամինով աշքի յեն ընկնում բրնձի,
ցորենի և ուրիշ հացաբույսերի սերմերի արտաքին շերտը,
բանջարեղեններից՝ գազարը, սպանախը, կաղամբը, ճակն-
դեղը, կանաչ լոբին, տոմատը, պտուղներից՝ նարինջը,
խնձորը և տանձը:

Վիտամին C.—Այս վիտամինի բացակայությունից ա-
ռաջ և գալիս լնգախտ հիվանդությունը: Յ վիտամինը շատ
է գտնվում թարմ բանջարեղենների մեջ, ինչպես՝ կաղամ-
բի, սալաթի, սպանախի, սոխի, սխտորի, տարդեղի, տո-
մատի և կարտոֆիլի մեջ. կա նաև բազմաթիվ պտուղների՝
խաղողի, նարնջի, կիտրոնի և հատապտուղների մեջ:

Յ վիտամինը, տարբերվում ե Ա և Յ վիտամիններից
նրանով, վոր ջերմության բարձր աստիճաններում (50°-ից
սկսած) և բանջարեղենները չորացնելուց արագությամբ
քայլայվում ե: Թթու նյութերի ներկայության դեպքում
ավելի կայուն ե լինում: Զերմության նկատմամբ Ա և Յ վիտամիններն ավելի կայուն են:

Մյուս վիտամիններն այնքան ել չեն պատահում բան-
ջարեղենների մեջ:

Ընդհանուր առմամբ բանջարեղենները համարվում են
վիտամինային մննդանյութեր: Պարարտացման միջոցով
յերբ բարձրացնում ենք բանջարեղենների բերքը, դրանով
շատացնում ենք ժողովրդական մննդին և հասարակական
առողջությանն անչափ կարենոր վիտամինները:

ՈՐԳԱՆԱԿԱՆ ՊԱՐԱՐՏԱՆՅՈՒԹԵՐ

Գոմալիք. — Գոմալիքն ամենահին պարարտանյութն ե,
առհասարակ և հավանաբար նա ամենից առաջ գործ և
ածվել բանջարանոցները պարարտացնելու համար: Մինչև
հիմա ել ամենուրեք բանջարանոցները մեծ չափով պա-
րարտացնում են գոմալիքով և նա համարվում ե լավագույն
պարարտանյութը: Բանջարանոցներին սովորաբար միշտ ել

հատկացնում են բնակելի տներին մոտիկ հողամասեր կամ
քաղաքամերձ վայրեր. շնորհիվ գրա ել, գոմալիքով կամ
այլ որդանական պարարտանյութով առաջին հերթին բավա-
րարում են բանջարանոցները:

Գոմալիքի նշանակությունը բանջարեղենների համար
այն ե, վոր:

1. գոմալիքը լրիվ պարարտանյութ ե. նրան բավարար
քանակությամբ գործադրելու գեպօսւմ բանջարեղեն բույ-
սերը լրիվ ապահովվում են բոլոր տեսակի հանքային
մննդանյութերով:

2. գոմալիքի հետ հողին մեծ քանակությամբ որգա-
նական նյութ ե արգում, վորը գառնում ե հողի հումուս-
վերջինս լավացնում ե հողի ֆիզիկական հատկությունները՝
ստեղծում ե ստրոկուլորա և հողի ջրային ու ջերմային
պայմանները լավացնում

3. մեր գաշտավայրերի և նախալեռնային շրջանների
հողերի ցածր բերքատվությունը, ինչպես նաև գործա-
դրվող հանքային պարարտանյութերի ցածր եֆեկտը
մեծ մասամբ նրանից ե, վոր այդ հողերում որգանական
նյութերը քիչ են. գոմալիքի ոգնությամբ շատացնելով հո-
ղի մեջ որգանական նյութերի քանակը՝ պայմաններ ենք
ստեղծում հանքային պարարտանյութերի բարձր եֆեկտի-
վության համար.

4. գոմալիքի հետ հողի մեջ մտնում են մեծ թվով
միկրոօրգանիզմներ և այնպիսի նյութեր, վորոնք զարկ են
տալիս թե հողի մեջ գտնվող և թե գոմալիքի հետ նրան
որգող միկրոօրգանիզմների գործունեյությանը.

5. գոմալիքի հետ հողին տրված որգանական նյութե-
րը քայլայվելով տալիս են ածխաթթու զազ (CO_2). Քեր-
մինս հողի ջրի մեջ լուծվելով նպաստում ե մի շարք հան-
քային դժվարալուծ մննդանյութերի լուծվելուն և դրանով
իսկ նպաստում բույսերի առատ մննդառությանը.

6. ածխաթթու զազը հողից գուրս գալով մեծ մա-
սամբ կլանվում ե կանաչ բույսերի կողմից և վերածվում
ե որդանական նյութերի:

Կարձ վեգետացիա ունեցող մի շարք բանջարեղենների համար, ինչպիսին են՝ սալաթը, սպանախը, ամսական բողիքը, ամսական կաղամբը և այլն, գոմազբի պարարտացումը միշտ լավ արդյունք չի տալիս, փորովինետն այդ բույսերը կարձ ժամանակում կարիք ունեն մեծ քանակությամբ ևննդանյութերի, իսկ գոմազբի քայլքայումը հողերում այնքան ել արագ չի կատարվում, փորպեսդի նրանում գտնվող սննդանյութերը մատչելի դառնան բույսերի համար։ Այդ բանջարեղեններն իրենց կյանքի առաջին շրջանում խիստ կարիք ունեն հանքային սննդանյութերի, իսկ գոմազըն այդ ժամանակում դանդաղ ե քայլքայում։ Նման դեպքերում լավ կլինի գոմազբի հետ խառնել հանքային պարարտանյութեր, կամ գոմազըը հողի մեջ մտցնել աշնանից, փորպեսդի մինչև գարուն այդ գոմազըը մեծ չափով քայլքայմած լինի։

Այս տեսակետից գոմազըը, փորպես դանդաղ ներգործող պարարտանյութ, լավ ե յերկար վեգետացիա ունեցող բանջարեղենների համար, ինչպիսին են՝ սոխը, սխտորը, տոմատը, ուշահաս կաղամբը և այլն։

Բանջարանոցը պարարտացնելու համար միշտ ավելի շատ որդանական պարարտանյութ ե գործադրյում, քան միամյա դաշտային կուլտուրաների համար։

Բանջարեղեններից բարձր բերք ստանալու համար, ամենաքիչը պետք ե մեկ հեկտարին տալ 60—80 տոնն գոմազը, փորը բավական կլինի 2—3 տարվա համար։ Յեթե գոմազբի հետ միասին ամեն տարի արվում ե հանքային աւատ պարարտանյութ, ապա 2 տարվա համար բավական կլինի 20—30 տոնն. հարուստ հողերում այդ քանակը կարելի յե իջեցնել 15—20 տոննի։

Գոմազըով բանջարանոցները կարելի յե պարարտացնել թե աշնանը և թե գարնանը։ Մեր պայմաններում, մտնավանդ այն բանջարեղենների համար, փորոնք ջերմոցներից են տեղափոխվում դաշտ և առհասարակ յերկար վե-

գետացիոն շրջան ունեն, կարելի յե միշտ ել պարարտացնել վաղ գարնանը։

Բանջարեղենները գոմազըով աշնանից պարարտացնելլ լավ ե այն դեպքում, յերբ մշակվելու յե վաղ գարնանից կամ աշնանից ցանովի բանջարեղենն, ինչպես նաև կարձ վեգետացիա ունեցող բույսեր, փորպեսդի այդ բույսերն աճեցողության բուռն շրջանում ապահովված լինեն մննդանյութերով։

Գոմազըը պետք ե դաշտ տանել և հողի յերեսը փոել վարից կամ կրկնավարից անմիջապես առաջ, չպետք ե գոմազըը յերկար թողնել հողի յերեսին փոփած։ Վարի կամ կրկնավարի ժամանակ դաշտը պարարտացնելիս գոմազըը հավասարապես տարածվում ե ամբողջ դաշտի վրա, իսկ յերբ նպատակ ունեն գոմազըով բանջարեղենների համար թմբեր կամ մարգեր պարարտացնել, ապա կարելի յե գոմազըը տարածել թմբերի վրա այն մասերում միայն, ուր գլխավորաբար տարածվելու յեն բույսերի արմատները։ այդ դեպքում գոմազբի զգալի խնայողություն կլինի և մեկ հեկտարին բավական կլինի 40—50 տոնն։

Գոմազըը հողի մեջ մտցնելու խորությունը պետք ե լինի վարփող շերտի խորության՝ 15—20 սմ. թեթև ափազային հողերում կարելի յե ավելի խոր շերտում խառնել (մինչև 25 սմ), քան ծանր կավայիններում (մինչև 15 սմ)։

Յեթե պարարտացվող հողը բավականին հարուստ ե և գոմազըով տուատ պարարտացման հետևանքով վախ կա, փոր բանջարեղենի փորակն ընկնի, կամ մի շարք սնկային և միջատային հիվանդություններ տարածվեն, ապա լավ կլինի այդ դեպքում վերցնել գոմազբի կես գոզա և նրան խառնել 2—3 ցենտներ սուպերֆուֆատ, փորը կկանխի այդ վոչ ցանկալի յերևույթները։

Գոմազըի հեղուկով (հաՅօնայ շիկա) բանջարեղենները՝ պարարտացնելու պայմանները հետկայններն են. մեկ հեկտարի համար բավական կլինի 15—20 խոր. մետր

հեղուկ. հեղուկը դաշտ են փոխադրում տակառներով, իսկ
դաշտում շաղ են տալիս տակառներին ամրացրած
«ցնցուղ» հարմարությունների ոգնությամբ, հավասարա-
պես։ Վորովհնետև հեղուկն արագ ներդործող պարարտա-
նյութ ե, ապա պետք ե դաշտ տանել գարնանը, այն ել
վարի կամ կրկնավարի որերին։ Հեղուկը հողի յերեսը շաղ
տալուց հետո անմիջապես պետք ե վարել. վորքան ուշա-
նա վարը, այնքան կընկնի հեղուկի (նաև գոմաղբի) աղ-
դեցությունը։ Տնամերձ և փոքր բանջարանոցները կարելի
յե պարարտացնել հեղուկով, ձեռքի ցնցուղների ոգնու-
թյամբ, նույնիսկ այն ժամանակ, յերբ արդեն բույսերը
միթիլած են կամ աճում են հողամասում։ Մեկ վեդրո հե-
ղուկը բավական կիննի 5 քառ. մետր տարածության հա-
մար։ Այս գեպըում պետք ե զգուշ լինել, վոր գոմաղբի հե-
ղուկը չթափվի բույսերի տերենների վրա, վորովհնետև դրա-
նից բույսերի տերենները կարող են տուժել։ Այս աշխա-
տանքը կատարելուց անմիջապես հետո անհրաժեշտ ե ջրել
բանջարանոցը, վորովհնետև գոմաղբի հեղուկն այնքան քիչ
ե լինում, վոր հազիվ ե թրջում հողի յերեսը, իսկ բույ-
սերի արմատներին չի հասնի. ջուրը լուծելով իրեն հետ
տանում ե գեպի արմատները հեղուկի մեջ յեղած սննդա-
նյութերը։

ՅԵԿԱԼ ՊԱՐԱՐՏԱՆՅՈՒԹԵՐ ԿԱՄ «ԳՐԵՐԱՅԻՆ ՎՈԱԿԻ»

Ինչպես գոմաղբը, այնպես ել մարդկային արտաթուրությունները շատ վաղուց ոգտագործվում են վորպես պարարտանյութ։ Իրենց կազմությամբ և պարարտացնող հատկությամբ լավ պահած «զիշերային վոռկին» գրեթե գոմաղբին հավասար եւ:

Արտաթորությունների մեջ յեղած նյութերից ամենաարժեքավորն ազոտն է, և այդ տեսակետից ֆեկալ պարագանյութերը կարելի յե համարել ազոտական պարագանյութեր:

Ֆեկալ պարտանյութերի պահելու պայմանները մեծ չափով ազդում են նբանց վորակի վրա, ուստաքորաբար ազդուի քանիակի և ձևափոխման վրա:

Արտաթուղությունների հավաքելը և դաշտ տեղափոխությունները կատարվում են յերք տարբեր սիստեմներով.

1. փոսերի սիստեմ.
 2. տակառների սիստեմ.

3 կանայիկացիայի (կոյուղու) սիստեմ:

Սրանցից ամենաակատարելագործվածը կոյուղու սիս-
տեմն ե, վոր կիրապվում ե մեծ քաղաքների անմաքրու-
թյունները դուրս հանելու և միաժամանակ շրջակայրի հո-
ղերը պարարտացնելու համար. այդ բանը կատարվում ե
«գաշտերի վոռոգման» սիստեմով: Կոյուղու սիստեմի առա-
վելությունների և տեխնիկայի մասին այս գրքույկում
ավելորդ ենք համարում խոռոչը, քանի վոր ամբողջ Հա-
յաստանում դեռևս փոչ մի տեղ կոյուղու ջերերով դաշտերը
չեն պարարտացվում. ծրագրված ե Յերևանի կոյուղին
պատրաստելուց հետո նրա ջերերով պարարտացնել քաղա-
քամերձ բանջարանոցների հողերը:

Գյուղական վայրերում և առանձին տնտեսությունների մեջ ամենից շատ տարածվածը փոսերի սիստեմն եւ տակառների սիստեմը թեև ավելի կատարյալ եւ, քան փոսերի սիստեմը, սակայն առայժմ նրան մեզ մոտ մասամբականացնելը կապված է մի շարք դժվարությունների հետ։ Մեր կարծիքով ներկայումս Հայաստանի գյուղերում արտաքնոցների ազգը պարարտացման համար պատրաստելու լավագույն ձևը հետեւյալն է.

Վոչ շատ խոր արտաքնոցի փոսերի հատակը և պատերն ամրացնել ջրին անթափանց շերտով. արտաքնոցի սի անկյունում ունենալ մոխիր, պարտիզի լավ հող, կամ, յեթե կա, ամենից լավ ե՝ տորֆի փոշի. ամեն անդամ արտաքնոցից ոգտվելուց հետո մի քիչ այդ նյութերից շատ տալ արտաթորթույան վրա, վորով արտաթորությունների

հեղուկ մասը կծծվի այդ նյութերի մեջ ու կպահպանվի արագ քայլայվելուց. զրա շնորհիվ թե ոդք մաքուր կլինի և թե աղբը կդառնա լավ գորակի պարարտանյութ։ Այդ արտաքնոցներից աղբը գոխանակ առանձին ոգտագործելու, լավ և պարբերաբար հանել, խառնել գոմաղբի կույտին և նրա հետ միասին գործադրել։ Գոմաղբ չունենալու դեպքում արտաքնոցի աղբը կարելի յե գործադրել նաև առանձին։

Արտաքնոցի աղբն առանձին ոգտագործելու տեխնիկան նման է գոմաղբի գործադրմանը։ Լավ և դաշտ տառել և հողի մեջ մացնել աշնանից։ Մեկ հեկտար բանջարանոցին բավական կլինի 40 խոր. մետր, մոտ 20 տոնն աղբ, վորի մեջ մոռագորագես կդառնվի 80 կգ աղոտ (N). 16 կգ ֆոսֆորաթթու (P₂O₅) և 30 կգ կալի (K₂O)։ Յեթե ֆեկալ պարարտանյութի հետ խառնված և տնտեսության մոխիրը, ապա պետք ե զգուշ լինել և մի քանի տարի իրար վրա գրանով առատ չպարարտացնել հողը, գորովնետև այդ աղբի մեջ գտնվող լուծելի աղերը (կերակրի աղ) հեշտությամբ փչացնում են հողի ֆիզիկական հատկությունները. այս բանը խիստ կարտահայտվի ծանր կավային հողերի վրա։

Ֆեկալ պարարտանյութն ել դաշտ պետք ե տառել վարից անմիջապես առաջ, վորակեսզի շաղ տրվելուց հետո խսկույն խառնվի վարվող հողի հետ, հակառակ դեպքում՝ այդ պարարտանյութից ել գոմաղբի նման, աղոտի մեծ մասը հեշտությամբ կհեռանա։

Յեթե պարզված ե, վոր պարարտացվող հողը, աղոտից բացի, կարիք ունի նաև ֆոսֆորական և կալիական պարարտանյութերի, ապաֆեկալ պարարտանյութին պետք ե լրացուցիչ տալ հանքային պարարտանյութեր, քանի վոր 20 տոնն աղբի մեջ յեղած ֆոսֆորն ու կալիումը բավարար քանակությամբ չեն լինում։

Տնտեսության մյուս բափուկները և բակի ու փողոցի աղբը նույնպես կարելի յե ոգտագործել բանջարանոցները պարարտացնելու հարաբ. զրանցից կարելի յե պատրաստել կոմպոստ համար կարելի յե և պետք ե ոգտագործել տան, բակի և փողոցի աղբը, մոխիրը, վոսկորները, թռչունների, շների, ճագարների և այլ կենդանիների աղբը, անպետք մոլախոտերը, բանջարեղենների փչացած մացորդները, հին և փչացած գարմանը, չոր տերևները և շատ ուրիշ բաներ։ Այս բոլորից նույնիսկ վոքքը տնտեսությունների մեջ մեկ տարում կարելի յե անօան կոմպոստ պարարտանյութ պատրաստել, վորով կարելի կլինի պարարտացնել թեկուղ անհատական ոգտագործման համար համար հատկացված տնամերձ հողամասերը։

Բակի մեկ անկյունում բոլոր պետք ե մի կույտ անել և հետեւ վոր շնորանա. լավ և յերբեմն թրջել ջրով կամ գոմաղբի հեղուկով, և տարվա մեջ 2—3 անգամ բահով շուռ տալ, խառնել և ապա նորից ամբացնել։ Այս ձեռվ պահած կոմպոստը 8—12 ամիս հետո պատրաստ կլինի պարարտացման համար։

Կոմպոստ պարարտանյութով մեկ հեկտարը պարարտացնելու համար բավական կլինի 20 տոնն։ Կաղամբի և ճակնդեղի համար հողը կոմպոստով պետք ե պարարտացնել գարնանը, իսկ մյուսների համար՝ աշնանից։ Պատրաստի կոմպոստը կարելի յե խառնել նույնպես գոմաղբի և ֆեկալ պարարտանյութերի հետ և միասին գործադրել։

Կանոչ պարարտացում—Բանջարեղենների բերքատվությունը բարձրացնելու գործում որգանական պարարտանյութերից կանաչ պարարտացումն անշուշտ մեծ գործ է կատարում։ Թեև չայաստանում այդ ուղղությամբ զբեթե վոչ մի վորձնական տվյալ չկա, բայց ոգտվելով ուրիշ տեղերում կատարված բաղմաթիվ փորձերի տվյալներից՝ կարելի յե ասել, վոր չայաստանի խոնավ և ջրով ապահոված շրջաններում և տնտեսությունների մեջ պետք ե

Բանջարանոցները պարաբռացնել կանաչ պարաբռացման միջոցով։ Դաշտավայրում նույնիսկ կարելի յե հացարույները հնձելուց հետո անմիջապես խոզանավար անել և ցանել սոյս, վիկ, մաշ և այլ նման բույսերը. դրանք մինչև ուշ աշուն բավականին կածեն. աշնանը նրանց կարելի յե հնձել խոտի համար, կամ վարել հողի մեջ, վորից հետո մինչեւ մյուս գարուն այս հողը բանջարանոցի համար կդառնա շատ լավ վորակի հող։

ԱՆՔԱՅԻՆ ՊԱՐԱՏԱՆՅՈՒԹԵՐ

Բանջարանոցները լրիվ պարաբռացնելու համար տըն-տեսության մեջ յեղած զոմաղբն ու մյուս բնական պարաբռանյութերը շատ դեպքերում չեն բավարարում, դրա համար ել պետք ե նրանց պակասը լրացնել հանքային պարաբռանյութերով. վերջիններս վոչ թե փոխարինելու յեն որգանական պարաբռանյութերին, այլ միայն լրացնելու յեն նրանց պակասը։ Բանջարեղենների համար ամեն դեպքում առաջնությունը պետք ե տալ որգանական պարաբռանյութերին, վորովհետև սրանք վոչ միայն բարձրացնում են հողերի սննդանյութերի պաշարը, այլև իրենց կողմանի ազդեցությամբ լավացնում են հողի ֆիզիկական դրությունը։

Այն դեպքում միայն, յերբ հողը լավ ֆիզիկական դրության մեջ ե գտնվում, կարելի յե քիչ զոմաղբ գործադրել և ավելի շատ հանքային պարաբռանյութեր, այն ել այն նպատակով, վոր խնայված զոմաղբով նոր տարածություններ պարաբռացվեն։

Բազմաթիվ փորձերը ցույց են տվել, վոր հանքային պարաբռանյութերն ավելի բարձր արգյունք են տալիս այն դեպքում, յերբ հողն ապահոված ե որգանական նյութերով. այս բանն ավելի շատ վերաբերում է Հայաստանի հողերին և մանավանդ բանջարանոցներին։

Ազուական պարաբռանյութեր. — Ներկայումս գորություն ունեն բազմատեսակ ազուական պարաբռանյութեր՝ գրանցից մենք կանգ կառնենք այն տեսակների վրա, վորոնք վերջին տարիներս զործադրվել են Հայաստանում՝ մեծ մասամբ բամբակի դաշտերը պարաբռացնելու համար։ Նույն այդ պարաբռանյութերը կարելի յե զործադրել նաև բանջարանոցների համար. դրանցից են՝

1. ամոնիում սուլֆատ $20^0/0$ ազուական
2. ազուաթթվական ամոնիում . . . $35^0/0$ »
3. լեյնասելիտրա $25^0/0$ »
4. կալցի ցիանամիդ (կրաղու) . $18-20^0/0$ »

Ազուական պարաբռանյութերով չարժե պարաբռացնել այն բանջարանոցները, վորոնք նույն տարում ստացել են լրիվ որգանական պարաբռանյութ. վերջինների բացակայության և պակասի դեպքում պետք ե գործադրել հանքային պարաբռանյութեր, մեծ մասամբ՝ ազուական պարաբռանյութեր։

Ազուական պարաբռանյութերով չպետք ե պարաբռացնել լնդեղենները (լորի, սիսեռ, մաշ բակլա, վոլոս և այլն). մյուս բոլոր բանջարեղենները Հայաստանի գրեթե բոլոր ըրջաններում ազուական պարաբռանյութերով պարաբռացնելու կարիքը կզգան։

Հայաստանից դուրս կատարված բազմաթիվ փորձերը և մեզ մոտ դրած մի քանի փորձերը ցույց են տվել, վոր բանջարանոցները պարաբռացնելու համար ազուական բոլոր պարաբռանյութերն ել կարելի յե գործադրել։ և նրանք գրեթե հավասար արդյունք են տալիս։ Վորոշ տարրերություն կարելի յե դնել սելիտրաների և ամոնիակային պարաբռանյութերի մեջ. արմատապտուղների համար (ձակրնդեղ, գազար, բողկ) գերադասելի յե տալ նիտրատային պարաբռանյութեր. կարտոֆիլի, դղումի, վարուղի, ձմեռուկի և սեխի համար լավ են համարվում լեյնասելիտրան-

և ամոնիում սուլֆատը. կաղամբի, առմատի, բարդջանի, սոխի համար՝ լեյնասելիտամ, ամոնիում սուլֆատը և կալցի ցիանամիդը. տերևաբանջարեղենները (կանաչ սոխ, սպանախ, տաքեղ, սալաթ, գինձ և այլն) կարելի յե պարարտացնել բոլոր տեսակի ազոտական պարարտանյութերով:

Հայաստանում կատարված մի քանի փորձերը ցույց են տվել, վոր տոմատի և կաղամբի վրա ամենալավ ազգեցություն ե արել կալցի ցիանամիդը. բայց պետք ե ասել, վոր կալցի ցիանամիդից լավ արդյունք կարելի յե սպասել այն դեպքում միայն, յերբ նա շատ հին չի ե, մանավանդ, յեթե նա չի մնացել խոնավ պայմաններում:

Խոնավ պահեստներում կալցի ցիանամիդը փշանում և և նրանում գոյանում ե բույսերի համար մի թունավոր նյութ՝ դիցիանամիդ. այդ նյութի շատության դեպքում վոչ միայն կալցի ցիանամիդը կորցնում ե իր պարարտացնող ընդունակությունը, այլև զգալի չտիտվ ընկնում ե բերքը:

Ազոտական պարարտանյութերի դոզան մեկ հեկտար քանչարանոցի համար տարբեր կինի տարբեր հողերի, ինչպես նաև տարբեր բույսերի համար, այս պատճառով ել չի կարելի կայուն դոզա սահմանել բոլոր տեղերի համար. անհրաժեշտ ե այս խնդիրը պարզել տեղական փորձերի միջոցով: Մինչև հիմա այս ուղղությամբ Հայաստանում քիչ փորձեր կան կատարված: Բայց և այսպես հիմնվելով դրանց վրա և ավելի շատ ուրիշ յերկրներում և Ռուսաստանում կատարված բազմաթիվ փորձերի վրա՝ կարելի յե առաջարկել հետևյալ դոզաները:

Հաջորդ եջի աղյուսակի թվերը ցույց են տալիս պարարտանյութի անհրաժեշտ քանակը մեկ հեկտարի համար:

ԲՈՒՑԱՅԵՐԸ	Կալցի իոն	Կալցի ուրիշ	Կալցի ուրիշ	Այլա- նուրի
Կաղամբ	500	500	400	300
Տոմատ, Բարդջան, տարբեր . . .	300	300	240	170
Վարունգ, գաղար	300	300	240	170
Դդում, շաղցամ, ձակնողեղ	450	450	360	260
Գլուխ սոխ	200	200	160	120
Սպանախ, սպատագ	450	450	360	260

Այս դոզաներով պետք ե պարարտացնել այն դեպքում, յերբ հողն որպանական պտրարտանյութերով չի պարարտացվել. պետք ե պակասեցնել այս քանակներն այն դեպքում, յերբ բանջարանոցը պարարտացվել ե գոմաղբի վոչ լրիվ դողայով, կամ յերբ նախորդ տարում այդտեղ մշակվել ե թիթեռնածաղիկ բույս:

Ազոտական պարարտանյութերով կարելի յե պարարտացնել թե գարնանը և թե աշնանը. խոնավ և ավագուտ հողերում պետք ե խուսափել աշնան պարարտացումից, մանավանդ սելիտրաներով. այսպիսի հողերը սելիտրաներով պետք ե պարարտացնել միայն գարնանը: Կավային հողերում և չոր շրջաններում կարելի յե նաև աշնանից պարարտացնել: Բոլոր գեպքերումն ել պարարտանյութը պետք ե շաղ տալ հողի յերեսը՝ վարից, կրկնավարից կամ, ծայրահեղ գեպքում, վուշինելու աշխատանքներից պառաջ, վորպեսպի հետո խառնվեն հողի վարվող շերտերում: Յեթե բանջարանոցում բույսերն արդեն ծլել են, կամ ջերմոցից միթիլներն արդեն տեղափոխվել են դաշտը և այդ ժամանակ են ուղում պարարտացնել, ապա պետք ե դորձածել միայն սելիտրաներ, այն ել, ինչքան հնարավոր ե, պետք ե խառնել հողի հետ՝ առանց բույսերին վնասելու, և ապա լավ ջրել, վորպեսպի սննդանյութերը լուծվեն և հասնեն բույսերի արմատներին: Կարելի յե պահանջվող ազոտական

պարարտանյութի կեսը հողի մեջ մտցնել ցանքի կամ բույսերը տնկելու ժամանակ, իսկ մյուս կեսը՝ դրանից մեկ ամիս հետո. բայց դա պետք է անել միայն թեթև հողերում և սելֆորաներով: Մյուս ազոտական պարարտանյութերը պետք է մեկ անգամից մտցնել հողի մեջ՝ ցանքից առաջ կամ նույն ժամանակ:

Ըստօրական պարարտանյութերի նույնպես շատ տեսակներ կան, բայց Հայաստանի պայմաններում դրանցից լավագույնը և միակ արածվածը սուպերֆոսֆատն է: Մյուս ֆոսֆորական պարարտանյութերը Հայաստանի չոր և կրոս հողերի պայմաններում լավ արդյունք տալ չեն կարող:

Միայն սուպերֆոսֆատը, առանց որդանական կամ ազոտական պարարտանյութերի, Հայաստանի պայմաններում մեծ արդյունք տալ չի կարող: Բայց սուպերֆոսֆատի և որդանական կամ ազոտական պարարտանյութերի միաժամանակ գործադրումը տալիս եւ ամելի մեծ արդյունք, քան դրանք առանձին-առանձին գործադրելիս:

Սուպերֆոսֆատի պահանջվող քանակը մեկ հեկտար քանչարանոցը պարարտացնելու համար նույնպես տարբեր կինք՝ նայած հողին և բույսին: Այս ուղղությամբ Հայաստանում կատարված փոքրաթիվ փորձերից յելնելով կարելի յեւ ասել, փոր միանգամայն բավական կլինի բանջարանոցների համար 400—600 կգ սուպերֆոսֆատ՝ թե առանձին գործադրելիս և թե մյուս պարարտանյութերի հետ խառնելիս:

Միայն սուպերֆոսֆատով արժե պարարտացնել ընդեղները, վորոնք ազոտական պարարտանյութերի կարիք չեն զգում: Սուպերֆոսֆատի ներկայության դեպքում թե թիթեռնածաղիկ բույսերի պալարաբակտերիաները և թե ուրիշ խմբի բակտերիաներ ավելի շատ ողի ազոտ են կապում և դրանով հարստացնում են հողերը:

Մեր պայմաններում սուպերֆոսֆատով պարարտացնելու աշխատանքները կարելի յեւ հարմարեցնել գոմաղբով կամ ազոտով պարարտացնելու աշխատանքների հետ: Յեթե բանջարանոցը պետք է պարարտացնել սուպերֆոսֆատով և ամոնիում սուլֆատով, ապա կարելի յեւ նըանց անհրաժեշտ քանակները պահեստում նախապես խառնել միմյանց հետ և այդպես գործադրել: Բայց չի կարելի նույն բանն անել և միմյանց հետ խառնել սուպերֆոսֆատը մյուս ազոտական պարարտանյութերի հետ — ամոնիում նիտրատ լեյնասելիտը և կալցի ցիանամիդ:

Սուպերֆոսֆատը կարելի յեւ առաջուց խառնել նաև գոմաղբի և կոմպոստի հետ. այդ դեպքում նա թույլ չի տա, վոր վերջիններից ամոնիակի կորուստ լինի: Յեթե մեկ հեկտարին փոխանակ 80 տոնն գոմաղբի ուղղում են մեկ հեկտարին փոխանակ 80 տոնն, ապա նըա հետ պետք է խառնել նրա կեսը՝ 40 տոնն, ապա նըա հետ պետք է խառնել 400 կգ սուպերֆոսֆատ:

Վաշ մի դեպքում սուպերֆոսֆատով չպետք է պարարտացնել այն ժամանակ, յերբ ցանքն արդեն կատարվել ե, կամ չերմոցից արդեն բույսերը տեղափոխել են, դաշտը. նա այդ դեպքում նույն տարում արդյունք չի տա: Սուպերֆոսֆատը շաղ տալուց հետո պետք է վարել և նըան խառնել հողի վարվող շերտի հետ:

ԿԱԼԻԱԿԱՆ ՊԱՐԱՐՏԱՆՅՈՒԹԵՐ ՅԵՎ ՄՈԽԵՐ

Հայաստանում մինչև հիմա կատարված դաշտային փորձերում գրեթե չեն յեղել այնպիսինները, վորոնցով պարզեցինք կալիական պարարտանյութերի դերը բանջարագեյինք կարգատվությունը բարձրացնելու գործում: Մի քանի փորձ են յեղել դաշտային բույսերի հետ, վորոնց տվյալները մեծ մասամբ ապացուցում են, փոր Հայաստանի հողերը, մանավանդ դաշտավայրի վոռոգվող և կավային հողերը կարիք չունեն կալիական պարարտանյութերի

այն ժամանակ, յերբ այդ հողերում մշակվում են հացահատիկ կամ բամբակ: Բայց նույն բանը մի շարք բանջարեղենների նկատմամբ դժվար թէ ճիշտ լինի Հայաստանի բոլոր շրջանների համար. նամանավանդ ճակնդեղը, կարտոֆիլը, գազարը և այլն, թեթև հողերում յերեկի կարիք կզգան նաև այդ պարարտանյութերի, յեթե վոչ հիմա, ապա մի քանի տարվա ինտենսիվ մշակույթից ու բարձր բերքից հետո: Բայց և այնպես ընդհանուր առմամբ կարելի յէ ասել, վոր յեթե Հայաստանի հողերում կիրառվի բարձր ագրոտեխնիկա և հողերը պարարտացվեն աղոտական և ֆոսֆորական պարարտանյութերով, ապա կարելի կլինի տուանց կալի ավելի քան կրկնապատկել բերքատվությունը:

Այն դեպքում, յերբ բանջարանոցներն անպայման կալիական պարարտանյութերով պետք ե պարարտացնել, ապա ամեն կերպ պետք ե խուսափել կալիի բնական պարարտանյութերից, որինակ՝ անմշակ սելֆինտից, վորովինեան դրանց մեջ մեծ քանակությամբ կերակրի աղ և գտնվում, վորը բացասաբար կաղզի թէ հողի, և թէ բերքի վրա: Այդ տեսակետից պետք ե գործադրել վերամշակված, հարստացրած կալիական պարարտանյութեր, վորոնց մեջ բալաստ նյութեր շատ կան, իսկ կալիի տոկոսը բարձր ե, որինակ՝ 30%, 40%-ային աղեր, կամ կալիում քլորիդ, իսկ ամենից լավ՝ կալիում սուլֆատ:

Մեկ հեկտար բանջարանոցի համար 30%-անոց աղի դեպքում բավական կլինի 200—300 կգ, ավելի բարձր տոկոսի աղերի դեպքում պարարտանյութի քանակը համապատասխան չափով ցած կիշնի:

Կալիական պարարտանյութերով կարելի յէ պարարտացնել հողերը նաև աշնանից և դա շատ անդամ լավ ե, յերբ գործադրվող պարարտանյութի մեջ մեծ քանակով բալաստ նյութ կա, կամ յերբ կալիումը միացած ե բլորի հետ (KCL): Այդ դեպքում մինչեւ գարուն ավելորդ նյութերը մեծ մասամբ հողից կհեռանան, իսկ կալիումը կմնա-

հողի մեջ կլանված ձևով: Բայց աշխատանքի պարզության տեսակետից կարելի յէ կալիական պարարտանյութերն ել ազոտի և ֆոսֆորի պարարտանյութերի հետ միասին և միաժամանակ մտցնել հողի մեջ:

Մոխիրը շատ ծանոթ պարարտանյութերից մեկն ե բանջարաբուծության մեջ. կարելի յէ այն համարել կալիական և մեծ մասամբ նաև ֆոսֆորական պարարտանյութ, քանի վոր նրանում մննդատունյութերից կալիումը և ֆոսֆորը գերակշռողներն են իրենց քանակով: Որինակ՝ կաղնի փայտի մոխրի մեջ գտնվում ե 13% կալի և 1,14% ֆոսֆորաթթու, իսկ աթարի մոխրի՝ մեջ 12% կալի և մոտ 5% ֆոսֆորաթթու:

Մոխիրը կալիական հանքային պարարտանյութերի նկատմամբ ունի մի շարք առավելություններ. բավական ե ասել, վոր նա այնքան միակողմանի պարարտանյութ չի և այնքան վտանգավոր բալաստ նյութեր չունի իր մեջ, ինչպես մի շարք կալիական պարարտանյութերը: Բայց, դժբախտաբար, մինչեւ հիմա հարկ յեղած ուշադրություն չի դարձվել մոխիրը փշանալուց պաշտպանելու և վորպես պարարտանյութ գործադրելու վրա: Մեր կարծիքով, յեթե Հայաստանում գոյացվող ամբողջ մոխիրը լավ պահպի և ոգտագործվի պարարտացման համար, ապա վոչ միայն բանջարանոցները, ալև մյուս բոլոր կուլտուրաների հողերը միանգամայն կապահովվեն կալիով:

Մոխիրն, ինչպես ասել ենք, շատ դեպքում ոգտագործում են գոմաղբի, կոմպոստի կամ ֆեկալ պարարտանյութերի հետ. բայց մոխիրն ոգտագործվում ե նաև առանձին:

Մոխիրն առանձին գործադրելիս պետք ե զգուշ լինել նրա մեծ քանակից, մոնավանդ այն դեպքում, յերբ պարարտացվող հողամասը ջրով աղահովված չե: Մոխիրը բավականին շատ լուծվող նյութեր ունի, վորոնք հողի ջրի մեջ լուծվում են. և յերբ հողը չորանում ե և բույսերը ջրի կարիք են զգում, ապա առատ մոխրով պարարտացրած

հողամասում բույսերն ավելի յեն առևժում ծարավից, քան
թե չպարարտացը առ առ բույսերը։ Այս պատճառով ել
շատ անդամ մոխիրը, փոխանակ բերքը բարձրացնելու, ընդ-
հակառակը, գցում ե բերքը. բայց զրա պատճառն այն ե,
վոր չափից շատ մոխիր ե արվում, իսկ ջրով ժամանակին
չեն ապահովում ցանքը։ Այստեղից ուրեմն պետք ե յեղ-
րակացնել, վոր մոխրով և առհասարակ պարարտացնելուց
հետո պետք ե խիստ հետեւ, վոր ջուրը վոչ մի որով
չուշանա:

Բանջարանոցները մոխրով պարարտացնելու պայման-
ները գրեթե նույնն են, ինչ վոր կալիական պարարտա-
նյութերինը:

Մեկ հեկտարը պարարտացնելու համար բավական ե
5—6 ցենաներ մոխիր։ Մոխիրն առաջուց չպետք ե խառ-
նել սուպերֆոսֆատի հետ։ Մոխրով և կալիական պարար-
տանյութերով չպետք ե մակերեսային պարարտացում
անել, վորովհետև դրանից առաջին տարում արգյունք չի
ստացվի։ Մոխրով պարարտացնելուց հետո, ինչպես մյուս
դեպքերում, պետք ե հողը վարել և նրան խառնել վար-
վող շերտի հետ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՈՒՆ

Եջ

1. Յերկու խոս	3
2. Բանջարանոցային բույսերի խմբավորումը յել առանձնահա- կարյուններ՝ կապված հողի պարարտացման հարցի հետ	4
3. Բանջարանոցային բույսերի ֆիմիական կազմը՝ կապված հողի պարարտացման հարցի հետ (ջուր, չոր սյութ, հանքային նյութեր, որդանական նյութեր, աղոտական նյութեր, վիտամիններ)	9
4. Որգանական պարարտանյութեր	18
Դոմազը	18
Ֆեկալ պարտանյութեր, կամ «գիշերային վուկի»	22
Կոմպոստ պարարտանյութեր	25
Կանաչ պարարտացում	25
5. Հանեային պարարտանյութեր	26
Աղոտական պարարտանյութեր	27
Ֆուֆորական պարարտանյութեր	30
Կալիական պարարտանյութեր և մոխիր	31



023

Վաճառքահետին Արք. Գրիգորյան

Սբբագրիչ՝ Գար. Հակոբյան

Քւավլիսի լիտոր Ն 9—91

Հրատ. Ա 210, պատվեր Ա 232, ակրած 3000,

Հանձնվել ե արտադրության 1985 թվի ապրիլի 1-ին

Սանրակրված ե տպագրելու 1985 թվի ապրիլի 28-ին

Գյուղեցական տպարան, Յերևան, Նալբանդյան Ն 50

«Ազգային գրադարան



NL0282126

15322

ЗОЧП.



Е. МОВСИЯН

Удобрение огородных культур

СЕЛЬХОЗГИЗ

1935

ЭРИВАНЬ